

ՄԵՐ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ,

Մեր տօներն կարգը և կատարելու ձևը ցոյց են տալիս Տօնացոյցը և նրա համառօտութիւն Օրացոյցը:

Տօնացոյցը վերջնական փոփոխութեան ենթարկուեց Երեւանցի Սիմէօն կաթողիկոսի ձեռքով ԺՂ. դարի երկրորդ կէտին: Այդ փոփոխութիւնը անելիս հանգուցեալ հայրապետը զեկաւարտել է յատկապէս կարեւորութիւն և առաջնութիւն տալով ազգային սուրբերին, և այսպէս առաջնորդուելով՝ տօնելի է դարձրել Յովհան Որոտնեցուն և Գրիգոր Տաթևացուն, որոնք ախոյեան էին հանգիսացել Ունիթոռներէ դէմ և բարի օրինակով վերականգնել վանական կարգերն ու աստուածային գրոց ուսումն: Յովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին ապրում էին ԺԳ. դարում և մեր եկեղեցում տօնելի սրբերից վերջինն են՝ Ժամանակի կարգով:

Սիմէօն կաթողիկոսը պարտաւորական դարձրեց Ս. Աստուածածնի երկու տօն էլ, որոնք են «Իււտ տիւոյ Ս. Աստուածածնի», որ կատարուում է Հոգեգալստից յետոյ Ս. կիւրակէին և «Իււտ գօաւոյ Սուրբ Աստուածածնի», որ կատարուում է Վերափոխումից յետոյ Գ. կիւրակէին, երկու տօներն էլ նախատօնակով—առաւօտեան և երեկոյեան պաշտամունքն Աստուածածնի, իսկ «Սուրբ Աստուած»-ն ու «Նաշուն»՝ յարութեան:

Այդ տօներից առաջինը յոյն և կաթողիկ եկեղեցում տօնուում է Յուլիսի 2-ին, իսկ երկրորդը՝ Օգոստոսի 31-ին, որ օրը և պատահի. Սիմէօն կաթողիկոսը պարտաւորական դարձնելով՝ որոշեց տօնել նշանակուած օրերին մերձաւոր կիւրակէ օրերը:

Սիմէօն կաթողիկոսի որբագրած Տօնացուցից առաջ հին Տօնացուցի վերջին ապագրութիւնը կատարուել է Կ. Պօլսում Հայոց ՌՃԳ և Փրկչի 1734 թուի յունվարին Աբրահամ կաթողիկոսի օրով և Կ. Պօլսոյ պատրիարք Յովհաննէս Եպիսկոպոսի հրամանով՝ Ասենի ժամագրքին կից: Այստեղ չկայ Յովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու տօնը: Իսկ Ս. Աստուածածնի վերև յիշուած տօների համար ասուած է. Ա. «Վեց-ըգ կիրակէին . . . »: «Իսկ տօն գիւտի տիւոյն Սուրբ Աստուածածնի յայտմ վայրն եղաւ, որ կատարի ի յուլիս Բ. եթէ կամիս ասնել տօնեա» (Մասն տօնացուցի երես ձի):

Բ. «Երրորդ կիրակէին (Վերափոխումից յետոյ) . . . »:

«Իսկ տօն գիւտի սուրբ Աստուածածին (Երեւի գօտայ Ս. Աստուածածին) յայտմ վայրի եղաւ, որ կատարի յօգոստոսի 1, Ա-ն, եթէ կամիս տօնել տօնեա»: (Երես ձեռ. ձեռ. Գ):

Ուրեմն Աստուածածնի այդ երկու տօներն էլ որ պարտաւորական չէին մեզ համար ժԸ. դարի առաջին կէսին, պարտաւորական դարձան երկրորդ կէսին:

Ս. Աստուածածնի միւս տօները, որոնք են. Վերափոխումն Ս. Աստուածածնի, (որ նոյնպէս կատարուած է կիւրակէ օրը), Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի» (սեպտեմբերի 8-ին), Ընծա-յումն Ս. Աստուածածնի ի տաճարն (21 նոյեմբերի) և Յղութիւն Ս. Աստուածածնի (9 դեկտեմբերի), կատարուած են նախատօնակալ, ուրեմն սրբոց տօներն պէս, միայն այն տարբերութեամբ, որ սրբոց տօներին «Քրիստոս Աստուած». «Սուրբ ճգնաւորօք» և «Պատկիչ սրբոց» կամ «Որ քնտրեցեր» է տուում, իսկ Ս. Աստուածածնի տօներին՝ «Սուրբ զԱստուածածինն», Ընկալ Տէր. և «Կեցո» տրւում: Այս վերջին հանգամանքով Աստուածածնի տօները տէրունականի կերպարանք են ստանում:

Վերափոխման տօնը կիւրակէ օրը տօնուելով, արդէն հանգստի օր է. միւս տօները, որ հասարակ օրեր են հանդիպում, տէրունական համարուելով, հանգստի կամ կիւրակէի օրեր են դառնում: Եթէ այդ օրերը տէրունական են դառնում «Կեցո»-ի համար, Վերափոխման կրկնակներին (9 օր) «Կեցո» է տրւում, ինչո՞ւ կիւրակէ չէ պահուում: Կարող ենք նոյնպէս վարուել և Ս. Աստուածածնի այս տօներին: Եկեղեցին սահմանուած կարգը կը կատարի. ժողովուրդից ցանկացողները կը դան եկեղեցի և այնուհետեւ իւրաքանչիւրը իւր գործին կրինի: Այսպիսով աշխատաւորները ազատուած կը լինեն աւելորդ պարապ օրերից և զրա հետեանքն եզող մոլութիւններից-արեւ-ցութիւն, անմիտ և յանցաւոր զուարճութիւններ ևլն:

Տօնացոյցներից յետոյ տօնակարգ ցոյց տուողն է Օրացոյցը: Վերջին տարիներս մեր օրացոյցի մէջ աւելացած են խաչանիշները: Խաչանիշը եթէ պէտք է ցոյց տայ կիւրակէ և տէրունական օրը, պէտք է սրբոց տօների վերայ չը դրուի: Բաց ենք անում ներկայ տարուայ օրացոյցը, կիւրակէի խաչանիշ դրուած է:

1. Յունիարի 15-ին, Ս. Յովհաննու Կարապետի Ծննդեան տօնին:

2. Փետրվարի 3-ին, Ս. Ղևոնդեանց տօնին:

3. Փետրվարի 5-ին Ս. Վարդանանց տօնին:

4. Մարտի 14-ին, Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊԵՆ.

5. Մարտի 28-ին, Աւագ—Հինգշաբթի. Յիշատակ ընթերցոց Տիառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

6. Մայիսի 30-ին Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւն ՎԻՐԱՊԷՆ:

7. Յուլիսի 13-ին, ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՅ Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ

8. Յուլիսի 18-ին, Սրբոյն Թարգմանչացն մերոյ Սահակայ և Մեսրոպայ:

9. Յուլիսի 11-ին, Սրբոյն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդխտոյ կուսին:

10. Օգոստոսի 15-ին Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի:

11. Սեպտեմբերի 8-ին. Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի:

12. Նոյեմբերի 21-ին Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն:

13. Նոյեմբերի 28-ին, Սրբոյ առաքելոյն և առաջին լուսաւորչացն մերոյ Թադէոսի և Բարդուղիմէոսի:

14. Դեկտեմբերի 9-ին. Յղութիւն Ս. Աստուածածնի:

Խաչանիշ ունեցող այս տօներից մի քանիսի համար նշանակուած են Օրացուցում նախատօնակներ, որ չըկան ոչ հին և ոչ Սիմէօն կաթողիկոսի կարգաւորած Տօնացոյցների մէջ:

Պօլսոյ Օրացոյցի մէջ տարբեր խաչանիշներ դրուած են կիւրակէ ու տէրունական տօների և սրբոյ տօների վերայ: Տէրունական, և ինչպէս Պօլսոյ ընդարձակ Օրացոյցի (1905 թ.) մէջ ասուած է, «հրամայեալ» տօների համար դորժ է ասուած քառակուսի, կիւրակէների սովորական խաչը, իսկ սրբոյ տօների համար, նրանց հանդիսաւորութիւնը ցոյց տալ կամենալով դրուած է ղուրը, երկարաւուն խաչ: Այդ օրացոյցի մէջ (1909 թ.) չըկան խաչանիշներ վերև ցոյց ասուած տօներէրից—

1. Ս. Յովհաննու ծննդեան. 2. Ս. Առնդեանց. 3. Շողակաթի Ս. Էջմիածնի, Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ:

Փոքր, երկարաւուն խաչանիշներ դրուած են. 1. Ս Վարդանանց. 2. Ս. Լուսաւորչի մուան ի վիրապն. 3. Ս. Լուսաւորչի եւն ի վիրապէն. 4. Սրբոյ Թարգմանչացն մերոյ Սահակայ և Մեսրոպայ. 5. Սրբոյն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին տօներին:

Քառակուսի, կիւրակէի սովորական խաչանիշ դրուած են 1. Աւագ Հինգշաբթի 2. Գիւտ նշխարաց սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի, 3. Ծնունդ Ս. Աստուածածնի յԱննայէ (8 սեպտեմբերի). 4. Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն (21 նոյեմբերի).

Անշուշտ մեր վերայ պարտաւորութիւն կայ յիշատակով պատուել մեր ազգի և եկեղեցու բարերարներին, որպիսի են Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները, Ս. Գրիգոր լուսաւորչի:

ւորիչը, Ս. Սահակ և Մեսրոպ Թարգմանիչները, Ս. Ղևոնդեանը և Վարդանանը և ինչ քայց նրանց տօներին օտերին պարագորգութեամբ անցնելը յիշատակ յարգել չէ, երբ եկեղեցիները դատարկ են լինում և ոչ ոք տօնելի օրերերով չէ հետաքրքրուում:

Մեր կարծիքով սրբոց տօներին կիւրակէի խաչանիշ դնելը, որով այդ օրերը տէրունական են համարուում, չէ համապատասխանում եկեղեցական կանոններին, ուրեմն պէտք է ոչ միայն չը քաջալերուի, այլ պէտք է յապաւուրի:

Կիւրակէի նշանը պէտք է միայն կիւրակէ օրերի վերայ դրուի. մնացեալ օրերին նրանց հանդիսաւորութիւնը ցոյց տալու համար, խաչի տեղ պէտք է ընտրանօք դնել փոքր երկարաւուն խաչ, որը կը լինի նշան, թէ տօնը կատարուելու է նախատօնակով, հանդիսաւորութեամբ:

Յուսիկ Արեւպիսկոպոս.

5 Մարտի 1909 ամի.

Ս. Էջմիածին:

